ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 536-Ա « 16 » մայիսի 2025թ.

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ըն- դունելով Երևանի քաղաքապետի 2024թ. դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավել- վածը՝ 2025թ. մայիսի 29-ից մինչև հուլիսի 2-ը ներառյալ «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ում իրականացնել 2022-2025 թվականների համակարգի գնահատման աուդիտ:

2. «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Ս.Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետներ Ա.Ավետիսյանին, Ս.Հարությունյանին և առաջատար մասնագետի ժ/պ Ս.Սարգսյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ